



ՍԱԿՐԱՍԵՆՏՈՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

1831 K Street  
Sacramento, CA 95811

Հեռ.՝ (916) 504-5800

Հեռախոս՝ (800) 719-5798

Անվճար հեռախոս՝ (800) 776-5746

Ֆաքս՝ (916) 504-5901

[www.disabilityrightsca.org](http://www.disabilityrightsca.org)

---

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ (OCRA)

### ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲՈՂՈՔ

Դուք կարող եք բողոք ներկայացնել, եթե.

- Օգնություն եք խնդրել OCRA-ից, սակայն Ձեզ պատասխանել են, որ չենք կարող օգնություն տրամադրել,
- Ներկայումս օգնություն եք ստանում OCRA-ից, սակայն դժգոհ եք այդ օգնությունից, կամ
- Ձեզ տրամադրվող օգնությունն ավարտվել է, և OCRA-ն մերժել է հետագայում օգնության տրամադրումը:

Բողոք ներկայացնելու համար խնդրում ենք անել հետևյալը.

#### **Քայլ 1: Disability Rights California-ի գործադիր տնօրեն**

Կարող եք բողոք ներկայացնել OCRA-ի գործադիր տնօրենին՝ OCRA-ի կողմից Ձեզ դուր չեկած որոշումը կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

Բողոքը կարող եք ներկայացնել՝ օգտագործելով կցված ձևաթուղթը, Ձեր բողոքը ձևակերելով այլ թղթի վրա կամ զանգահարելով Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություն: Ձեր բողոքն ուղարկեք.

Executive Director Disability Rights California

1831 K Street

Sacramento, CA 95811

(916) 504-5800 (վճարված զանգերի ընդունում) կամ (800) 776-5746

Ֆաքս՝ (916) 504-5809

Հեռախոս՝ (916) 719-5798

Էլ. փոստ՝ [executivedirector@disabilityrightsca.org](mailto:executivedirector@disabilityrightsca.org)

Գործադիր տնօրենը կվերանայի Ձեր բողոքը և Ձեզ կներկայացնի գրավոր որոշում 15 օրվա ընթացքում: Այս ժամկետը կարող է երկարացվել փոխադարձ համաձայնությամբ:

**Քայլ 2: Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Տնօրենների խորհուրդ**

Գործադիր տնօրենի կայացրած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում գործադիր տնօրենի կողմից որոշումը կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում կարող եք պահանջել վերանայում Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Խորհրդի գործադիր հանձնաժողովի բողոքների վերանայման հանձնաժողովի կողմից:

Վերանայումը կարող եք պահանջել՝ օգտագործելով կցված ձևաթուղթը, Ձեր պահանջը գրավոր ձևակերպելով մեկ այլ թղթի վրա կամ զանգահարելով Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություն: Ձեր պահանջն ուղարկեք.

President, Board of Directors Disability Rights California

1831 K Street

Sacramento, CA 95811

(916) 504-5800 (վճարված զանգերի ընդունում) կամ

(800) 776-5746

Ֆաքս՝ (916) 504-5809

Հեռախոս՝ (800) 719-5798

Էլ. փոստ՝ [board@disabilityrightsca.org](mailto:board@disabilityrightsca.org)

Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Խորհրդի գործադիր հանձնաժողովի բողոքների վերանայման հանձնաժողովը կվերանայի Ձեր բողոքը և կներկայացնի գրավոր որոշում 30 օրվա ընթացքում: Այս ժամկետը կարող է երկարացվել փոխադարձ համաձայնությամբ: Բողոքների վերանայման հանձնաժողովի որոշումը Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության վերջնական որոշումն է: Դուք կարող եք բողոքարկել որոշումը հաջորդ մակարդակում:

**Քայլ 3: Պայմանագրային ներկայացուցիչ  
Զարգացման խանգարումներով մարդկանց սոցիալական  
ապահովության դեպարտամենտ**

Եթե Դուք բավարարված չեք Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության՝ Ձեր բողոքին տրված արձագանքով, կարող եք պահանջել վերանայում Զարգացման խանգարումներով մարդկանց սոցիալական ապահովության դեպարտամենտի Պայմանագրային ներկայացուցչի կողմից: Այս պահանջը պետք է ներկայացնել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության Խորհրդի գործադիր հանձնաժողովի բողոքների վերանայման հանձնաժողովի կողմից վերջնական որոշումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Պայմանագրային ներկայացուցիչը կպատասխանի բողոքին 45 օրվա ընթացքում: Այս ժամկետը կարող է երկարացվել փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրային ներկայացուցչի կողմից բողոքը վերանայելու պահանջը պետք է գրավոր ներկայացնել:

OCRA Contract Representative  
Department of Developmental Services  
Office of Human Rights and Advocacy Services  
1600 Ninth Street, Room 240, MS 2-15  
Sacramento, CA 95814  
(916) 654-1888  
TDD` (916) 654-2054  
ՖԱՔՍ` (916) 651-8210

## Պաշտպանության այլ ծառայություններ

Եթե Ձեզ անհրաժեշտ է ավելին, քան կարող էր տրամադրել Ձեր CRA-ը, ապա կարող եք ստանալ լրացուցիչ աջակցություն զանգահարելով.

- Disability Rights California - 1-800-776-5746
- Տարածքային խորհուրդներ I-ից մինչև XIII - Ձեր հեռախոսագրքի Կալիֆորնիա նահանգի բաժնում փնտրեք Ձեր Տարածքային խորհրդի հեռախոսահամարը:

Բողոքարկման այս ընթացակարգը համապատասխանում է Contract HD 069010A-3, Exhibit A, Paragraph 12-ի պահանջներին, որն ուժի մեջ է մտել Ջարգացման խանգարումներով մարդկանց սոցիալական ապահովության պետական դեպարտամենտի և Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության միջև Հաճախորդների իրավունքների պաշտպանության գրասենյակի հիմնադրման նպատակով՝ Սոցիալական ապահովության օրենքի բաժին 4433-ին համաձայն:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ**

Բողոք ներկայացնելու համար Դուք կարող եք օգտագործել այս ձևաթուղթը կամ ցանկացած այլ թուղթ կամ զանգահարել (800) 776-5746 հեռախոսահամարով և ինդրել անձնակազմի որևէ անդամի օգնել Ձեզ: Կարող եք զանգահարել նաև մեզ (800) 719-5798 հեռատիպով, ուղարկել ֆաքս (916) 504-5809 համարով կամ ուղարկել էլ. նամակ [executivedirector@disabilityrightsca.org](mailto:executivedirector@disabilityrightsca.org) հասցեով:

Ձեր ԱՆՈՒՆԸ՝ \_\_\_\_\_

Ձեր ՀԱՍՑԵՆ՝ \_\_\_\_\_

Ձեր ցերեկային ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ՝ \_\_\_\_\_

Ձեր ԷԼ.ՓՈՍՄԻ ՀԱՍՑԵՆ՝ \_\_\_\_\_

Եթե որևէ մեկին օգնում եք կազմել բողոքը, նրանց անունները՝ \_\_\_\_\_

Խնդրում ենք բացատրել, թե ինչու եք բողոք ներկայացնում. \_\_\_\_\_

Ի՞նչն եք ցանկանում, որ Հաճախորդների իրավունքների պաշտպանության գրասենյակն անի այլ կերպ: